1994 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻՆ ԿԻՑ՝ «ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն Արձանագրության մասնակից պետությունները (այսուհետ՝ Պայմանավորվող պետություններ)՝ ի դեմս կառավարությունների,

հաշվի առնելով արդյունաբերական սեփականության օբյեկտների պահպանության եվրասիական համակարգն ընդլայնելու անհրաժեշտությունը,

ձգտելով ստեղծել արդյունաբերական նմուշների պահպանության միջպետական համակարգ՝ բոլոր Պայմանավորվող պետությունների տարածքում գործող միասնական եվրասիական արտոնագրի հիման վրա,

նպատակ ունենալով զարգացնելու Պայմանավորվող պետությունների ներքին շուկաները եւ բարձրացնելու իրենց տարածքների գրավչությունը՝ առեւտրի ու ներդրումային գործունեության զարգացման համար,

համաձայնեցին հետեւյալի մասին.

ՄԱՍ I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1

Արձանագրության կարգավիճակը

1) Սույն Արձանագրությունը հատուկ համաձայնագիր է՝ «Արդյունաբերական սեփականության պահպանության մասին» 1883 թվականի մարտի 20-ի Փարիզյան կոնվենցիայի (այսուհետ՝ Փարիզյան կոնվենցիա) 19-րդ հոդվածին համապատասխան:

2) Սույն Արձանագրությամբ Պայմանավորվող պետություններն ընդլայնում են Եվրասիական արտոնագրային կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ 1994 թվականի սեպտեմբերի 9-ի Եվրասիական արտոնագրային կոնվենցիայով (այսուհետ՝ Կոնվենցիա) նախատեսված գործառույթները՝ արդյունաբերական սեփականության օբյեկտների պահպանության բնագավառում:

3) Սույն Արձանագրությունը չի շոշափում արդյունաբերական նմուշների ազգային արտոնագրեր կամ պահպանական այլ փաստաթղթեր տրամադրելու՝ ցանկացած Պայմանավորվող պետության իրավունքները:

Հոդված 2

Եվրասիական արտոնագրային համակարգը

1) Կոնվենցիայի 1-ին հոդվածի 1-ին կետի համաձայն հիմնադրված Եվրասիական արտոնագրային համակարգը եւ Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն հիմնադրված Կազմակերպությունն իր բոլոր մարմինների հետ գործում են Կոնվենցիային համապատասխան տրամադրվող՝ գյուտերի պահպանության եւ սույն Արձանագրությանը համապատասխան տրամադրվող՝ արդյունաբերական նմուշների պահպանության նկատմամբ:

2) Արդյունաբերական նմուշների պահպանության նպատակով՝ Պայմանավորվող պետությունների տարածքը ճանաչվում է որպես տարածք, որտեղ գործում է Կոնվենցիան:

3) Կազմակերպությունն իրավունք ունի դառնալու արդյունաբերական նմուշների միջազգային գրանցում նախատեսող միջազգային պայմանագրի մասնակից՝ Կազմակերպության Վարչական խորհրդի՝ բոլոր Պայմանավորվող պետությունների լիազորված ներկայացուցիչների (նրանց տեղակալների) կողմից միաձայն ընդունված որոշմամբ: Ընդ որում, արդյունաբերական նմուշների պահպանության եվրասիական համակարգի շրջանակներում՝ միջազգային գրանցումների մասով կիրառվող ընթացակարգերին վերաբերող մանրամասները սահմանվում են Կոնվենցիային կից Արտոնագրային հրահանգով:

ՄԱՍ II

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ

Հոդված 3

Արտոնագրաունակ արդյունաբերական նմուշները

1) Իրավական պահպանության տրամադրման ենթակա արդյունաբերական նմուշ է համարվում արդյունաբերական կամ տնայնագործական-արհեստավորական արտադրության արտադրատեսակի՝ Կոնվենցիային կից Արտոնագրային հրահանգին համապատասխան արտոնագրաունակ հանդիսացող արտաքին տեսքի լուծումը:

2) Որպես արդյունաբերական նմուշի՝ իրավական պահպանություն չի տրամադրվում հետեւյալ որոշումներով, որոնք՝

i) հակասում են հանրային շահերին, մարդասիրության եւ բարոյականության սկզբունքներին թեկուզ մեկ Պայմանավորվող պետությունում.

ii) պարունակում, վերարտադրում կամ նմանակում են պաշտոնական խորհրդանիշեր (այդ թվում՝ պետական խորհրդանիշեր եւ նշաններ), միջազգային եւ միջկառավարական կազմակերպությունների կրճատ կամ լրիվ անվանումներ՝ առանց այն պետությունների համապատասխան իրավասու մարմինների,

կազմակերպությունների համաձայնության, որոնց շահերին են առնչվում այդ լուծումները.

iii) պարունակում, վերարտադրում կամ նմանակում են մշակութային (այդ թվում՝ էթնիկ ու կրոնական) ժառանգության օբյեկտների պաշտոնական անվանումները կամ պատկերները, դրանց ճանաչելի մասերը՝ առանց այն Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինների համաձայնության, որոնց շահերին են առնչվում այդ լուծումները:

Այլ լուծումների եւ օբյեկտների ցանկը, որոնց՝ որպես արդյունաբերական նմուշների, իրավական պահպանություն չի տրամադրվում, սահմանվում է Կոնվենցիային կից Արտոնագրային հրահանգով:

Հոդված 4

Արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագիր ստանալու իրավունք ունեցող անձինք

1) Արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագիր ստանալու իրավունքը պատկանում է արդյունաբերական նմուշի հեղինակին, այսինքն՝ այն ֆիզիկական անձին, որի ստեղծագործական աշխատանքով ստեղծվել է արդյունաբերական նմուշը կամ նրա իրավահաջորդին:

Աշխատանքային կամ քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում հեղինակի կողմից ստեղծված արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագիր ստանալու իրավունքի պատկանելությունը որոշվում է այդ հարաբերությունները կարգավորող պետության օրենսդրությանը համապատասխան:

2) Ընթացակարգի նպատակներով՝ Եվրասիական արտոնագրային գերատեսչությունում (այսուհետ՝ Եվրասիական գերատեսչություն) հայցտատուն համարվում է արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագիր ստանալու իրավունք ունեցող:

Հոդված 5

Առաջնության իրավունքը

Արդյունաբերական նմուշի նկատմամբ առաջնության իրավունքը ճանաչվում է Փարիզյան կոնվենցիային համապատասխան:

Հոդված 6

Արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագիրը

1) Արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագիրը հավաստում է արդյունաբերական նմուշի նկատմամբ հեղինակությունը, առաջնությունը եւ բացառիկ իրավունքը:

2) Արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագիրը գործում է միաժամանակ բոլոր Պայմանավորվող պետությունների տարածքում՝ հաշվի առնելով սույն Արձանագրության դրույթները:

Հոդված 7

Արդյունաբերական նմուշի իրավական պահպանության ծավալը

Արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագրով տրամադրվող իրավական պահպանության ծավալը որոշվում է արտադրատեսակի պատկերների վրա արտացոլված՝ արդյունաբերական նմուշի էական հատկանիշների ամբողջությամբ:

Հոդված 8

Արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագրի գործողության ժամկետը

1) Արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագրի գործողության ժամկետը կազմում է հինգ տարի՝ արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագիր տրամադրելու մասին հայտ (այսուհետ՝ արդյունաբերական նմուշի եվրասիական հայտ) ներկայացնելու օրվանից:

2) Արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագրի գործողության ժամկետը կարող է երկարաձգվել արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագրի իրավատիրոջ միջնորդությամբ՝ այն բոլոր Պայմանավորվող պետությունների տարածքում, որտեղ գործում է արտոնագիրը՝ յուրաքանչյուր անգամ՝ հինգ տարով: Ընդ որում, արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագրի գործողության ժամկետը չպետք է գերազանցի քսանհինգ տարին՝ արդյունաբերական նմուշի եվրասիական հայտ ներկայացնելու օրվանից:

Արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագրի գործողության ժամկետը երկարաձգվում է՝ Եվրասիական գերատեսչությանը համապատասխան տուրք վճարելու պայմանով:

Հոդված 9

Արդյունաբերական նմուշի նկատմամբ իրավունքները

1) Հեղինակության իրավունքը, այսինքն՝ որպես արդյունաբերական նմուշի հեղինակ ճանաչվելու իրավունքը, պատկանում է այն արդյունաբերական նմուշի հեղինակին (համահեղինակին), որի համար տրվել է եվրասիական արտոնագիրը:

2) Արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագրի իրավատիրոջը պատկանում է բացառիկ իրավունք, ինչն ասելով հասկանում ենք արդյունաբերական նմուշն օգտագործելու, ինչպես նաեւ արդյունաբերական նմուշի օգտագործումն այլ անձանց թույլատրելու և արգելելու իրավունքը:

Արդյունաբերական նմուշի նկատմամբ կատարվող եւ որպես դրա օգտագործում ճանաչվող գործողությունները որոշվում են Պայմանավորվող պետությունների օրենսդրություններին համապատասխան:

Եվրասիական արտոնագրի իրավատերն արդյունաբերական նմուշի նկատմամբ բացառիկ իրավունքը կարող է տնօրինել արտոնագրի գործողության ժամանակահատվածում՝ սկսած Եվրասիական գերատեսչության պաշտոնական տեղեկագրում դրա տրամադրման վերաբերյալ տեղեկությունների հրապարակման օրվանից:

Հոդված 10

Արդյունաբերական նմուշի նկատմամբ բացառիկ իրավունքը տնօրինելը: Բացառիկ իրավունքի փոխանցումը

1) Արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագրի իրավատերն իրավունք ունի արդյունաբերական նմուշի նկատմամբ բացառիկ իրավունքը փոխանցելու այլ անձի, տրամադրելու արդյունաբերական նմուշը լիցենզային պայմանագրով օգտագործելու իրավունք, գրավադրելու արդյունաբերական նմուշի նկատմամբ բացառիկ իրավունքը:

Արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագրով հավաստված բացառիկ իրավունքի փոխանցումն այլ անձի թույլատրվում է միայն այն բոլոր Պայմանավորվող պետությունների տարածքում, որտեղ գործում է արտոնագիրը:

Արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագրի իրավատերն իրավունք ունի արդյունաբերական նմուշի նկատմամբ բացառիկ իրավունքն առանձին Պայմանավորվող պետության մասով տնօրինելու այլ եղանակով, եթե այդպիսի տնօրինումը թույլատրվում է համապատասխան Պայմանավորվող պետության օրենսդրությանը համապատասխան:

2) Արդյունաբերական նմուշի նկատմամբ բացառիկ իրավունքը կարող է ժառանգությամբ կամ այլ իրավահաջորդության կարգով փոխանցվել միայն ամբողջությամբ:

3) Արդյունաբերական նմուշի նկատմամբ բացառիկ իրավունքի փոխանցման գրանցումը, այդ թվում՝ այն պայմանագրով փոխանցելու դեպքում, ինչպես նաեւ այդ բացառիկ իրավունքի գրավադրման գրանցումն իրականացվում է Եվրասիական գերատեսչության կողմից:

Լիցենզային պայմանագրի, ինչպես նաեւ սույն հոդվածի 1-ին կետի երրորդ մասի հիման վրա՝ Պայմանավորվող պետության օրենսդրությանը համապատասխան կնքված պայմանագրի գրանցումն իրականացվում է այն Պայմանավորվող պետության ազգային արտոնագրային գերատեսչության (այսուհետ՝ ազգային գերատեսչություն) կողմից, որի տարածքի մասով կնքվել է համապատասխան պայմանագիրը:

Հոդված 11

Արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագիրը անվավեր ճանաչելը

1) Արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագիրը կարող է անվավեր ճանաչվել Եվրասիական գերատեսչության կողմից՝ վարչական չեղարկման կարգով՝ սույն Արձանագրությամբ եւ Կոնվենցիային կից Արտոնագրային հրահանգով նախատեսված հիմքերով ու կարգով, կամ Պայմանավորվող պետությունների դատական կամ այլ իրավասու մարմինների կողմից՝ սույն Արձանագրությամբ եւ Կոնվենցիային կից Արտոնագրային հրահանգով նախատեսված հիմքերով, համապատասխան Պայմանավորվող պետության օրենսդրությամբ նախատեսված կարգով:

Արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագիրը վարչական չեղարկման կարգով անվավեր ճանաչելու վերաբերյալ կարող է ներկայացվել առարկություն, այդ թվում՝ ազգային գերատեսչության կողմից, եթե ազգային գերատեսչության՝ առարկություն ներկայացնելու իրավունքը նախատեսված է համապատասխան Պայմանավորվող պետության օրենսդրությամբ:

2) Արդյունաբերական նմուշի Եվրասիական արտոնագիրը վարչական չեղարկման կարգով անվավեր ճանաչելու վերաբերյալ առարկության ուսումնասիրության արդյունքներով ընդունված որոշումը կարող է բողոքարկվել Կոնվենցիային կից Արտոնագրային հրահանգով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագիրը անվավեր ճանաչելու մասին Եվրասիական գերատեսչության որոշումն ուժի մեջ է մտնում դրա բողոքարկման համար Կոնվենցիային կից Արտոնագրային հրահանգով սահմանված ժամկետը լրանալուց հետո եւ գործում է բոլոր Պայմանավորվող պետությունների տարածքում:

3) Արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագիրը անվավեր ճանաչելու մասին՝ Պայմանավորվող պետության դատական կամ այլ իրավասու մարմինների կողմից ընդունված որոշումը կարող է բողոքարկվել համապատասխան Պայմանավորվող պետության օրենսդրությամբ սահմանված կարգով եւ ժամկետներում: Սույն կետին համապատասխան ընդունված որոշումն ուժի մեջ է մտնում դրա բողոքարկման համար նախատեսված ժամկետը լրանալուն պես եւ գործում է այն Պայմանավորվող պետության տարածքի մասով, որի դատական կամ այլ իրավասու մարմինների կողմից այն ընդունվել է:

Պայմանավորվող պետությունը Եվրասիական գերատեսչությանը տեղեկացնում է արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագիրը անվավեր ճանաչելու վերաբերյալ ընդունված որոշման մասին:

Արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագիրը անվավեր ճանաչելու մասին՝ Պայմանավորվող պետության դատական կամ այլ իրավասու մարմինների կողմից ընդունված որոշումն ուժի մեջ մտնելու պահից արդյունաբերական նմուշի

միասնական իրավական պահպանությունը դադարեցվում է: Ընդ որում, արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագրի գործողությունը պահպանվում է այն Պայմանավորվող պետությունների տարածքում, որոնց մասով այդպիսի որոշում չի ընդունվել:

4) Արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագրի վավերականության վերաբերյալ վեճերը քննող՝ Պայմանավորվող պետությունների դատական եւ այլ իրավական մարմիններն իրավունք ունեն պահանջելու ներկայացնել արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագրի թարգմանությունը համապատասխան Պայմանավորվող պետության պետական լեզվով:

Հոդված 12

Իրավունքների պաշտպանության հետ կապված վեճերը

1) Սույն Արձանագրությանը եւ Կոնվենցիային կից Արտոնագրային հրահանգին համապատասխան տրամադրվող իրավունքների պաշտպանության հետ կապված վեճերը, բացառությամբ սույն Արձանագրության 11-րդ եւ 14-րդ հոդվածներով նախատեսված վեճերի, կարգավորվում են այն Պայմանավորվող պետության իրավունքի նյութական եւ դատավարական նորմերի հիման վրա, որի տարածքում խնդրարկվում է այդ իրավունքների պաշտպանությունը:

2) Վեճերը սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան քննող՝ Պայմանավորվող պետությունների դատական եւ այլ իրավասու մարմիններն իրավունք ունեն պահանջելու ներկայացնել արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագրի թարգմանությունը համապատասխան Պայմանավորվող պետության պետական լեզվով:

ՄԱՍ III

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐԻ ՄԱՍՈՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՆՈՐՄԵՐԸ

Հոդված 13

Արդյունաբերական նմուշի եվրասիական հայտը

1) Արդյունաբերական նմուշի եվրասիական հայտը ներկայացվում է Եվրասիական գերատեսչություն, բացի սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքերից:

2) Արդյունաբերական նմուշի եվրասիական հայտը Պայմանավորվող պետության հայտատուների կողմից ներկայացվում է ազգային գերատեսչության միջոցով, եթե դա նախատեսված է տվյալ Պայմանավորվող պետության

օրենսդրությամբ: Ազգային գերատեսչության միջոցով ներկայացված՝ արդյունաբերական նմուշի եվրասիական հայտը հանգեցնում է նույն հետեւանքների, որոնք կառաջանային, եթե հայտը նույն օրը ներկայացված լիներ Եվրասիական գերատեսչություն՝ պայմանով, որ այն ազգային գերատեսչության կողմից Եվրասիական գերատեսչություն է ուղարկվել Կոնվենցիային կից Արտոնագրային հրահանգով սահմանված ժամկետում:

3) Արդյունաբերական նմուշի եվրասիական հայտն անմիջապես Եվրասիական գերատեսչություն ներկայացնելիս միասնական ընթացակարգային տուրքը վճարվում է Եվրասիական գերատեսչությանը:

Արդյունաբերական նմուշի եվրասիական հայտն ազգային գերատեսչության միջոցով ներկայացնելիս՝ արդյունաբերական նմուշի եվրասիական հայտը մշակելու եւ ուղարկելու համար ազգային գերատեսչությանը վճարվում է տուրք, եթե այն սահմանված է համապատասխան Պայմանավորվող պետության օրենսդրությամբ, մինչդեռ միասնական ընթացակարգային տուրքը վճարվում է Եվրասիական գերատեսչությանը:

4) Արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագիր ստանալու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ Կոնվենցիային կից Արտոնագրային հրահանգով նախատեսված կարգով եւ պայմաններով:

Հոդված 14

Արդյունաբերական նմուշի եվրասիական հայտի քննարկումը

1) Արդյունաբերական նմուշի եվրասիական հայտի հիման վրա Եվրասիական գերատեսչությունն անցկացնում է նախնական փորձաքննություն, որի ընթացքում ստուգվում է հայտին ներկայացվող պահանջների, հայտը ներկայացնելու թվականը սահմանելու համար պայմանների պահպանումը, սույն արձանագրությամբ եւ Կոնվենցիային կից Արտոնագրային հրահանգով նախատեսված՝ հայտը ներկայացնելուն առնչվող մյուս պայմանների կատարումը, ինչպես նաեւ այն հանգամանքը, թե արդյոք արդյունաբերական նմուշը չի դասվում այն լուծումների շարքին, որոնք թեկուզ մեկ Պայմանավորվող պետությունում հակասում են հանրային շահերին, մարդասիրության եւ բարոյականության սկզբունքներին:

2) Եվրասիական գերատեսչությունը, Կոնվենցիային կից Արտոնագրային հրահանգին համապատասխան, հրապարակում է արդյունաբերական նմուշի այն եվրասիական հայտը, որով նախնական փորձաքննությունն ավարտվել է դրական արդյունքով, եւ անցկացնում է ըստ էության փորձաքննություն:

3) Արդյունաբերական նմուշի հրապարակված եվրասիական հայտի նկատմամբ սույն Արձանագրությամբ եւ Կոնվենցիային կից Արտոնագրային հրահանգով սահմանված հիմքերով արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագրի տրամադրման դեմ կարող է առարկություն ներկայացվել Եվրասիական գերատեսչություն, այդ թվում՝ ազգային գերատեսչության կողմից, եթե դա

նախատեսված է համապատասխան Պայմանավորվող պետության օրենսդրությամբ:

Արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագիր տրամադրելու դեմ առարկություններ ներկայացնելու եւ դրանք քննարկելու կարգն ու ժամկետները սահմանվում են Կոնվենցիային կից Արտոնագրային հրահանգով:

4) Արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագիր տրամադրելու կամ դրա տրամադրումը մերժելու վերաբերյալ որոշումն ընդունվում է Եվրասիական գերատեսչության կողմից՝ հաշվի առնելով արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագիր տրամադրելու դեմ Եվրասիական գերատեսչություն ներկայացված առարկությունների քննարկման արդյունքները:

5) Եվրասիական գերատեսչության որոշումները, այդ թվում՝ արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագիր տրամադրելու կամ դրա տրամադրումը մերժելու մասին որոշումները, հայտատուի կողմից կարող են բողոքարկվել Կոնվենցիային կից Արտոնագրային հրահանգով սահմանված կարգով եւ ժամկետներում՝ Եվրասիական գերատեսչություն առարկություն ներկայացնելու միջոցով:

Հոդված 15

Արդյունաբերական նմուշի գրանցումը եւ արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագրի տրամադրումը

1) Արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագիր տրամադրելու վերաբերյալ որոշման հիման վրա Եվրասիական գերատեսչությունն արդյունաբերական նմուշը գրանցում է արդյունաբերական նմուշների եվրասիական արտոնագրերի գրանցամատյանում:

2) Արդյունաբերական նմուշների եվրասիական արտոնագրերի գրանցամատյանում մուտքագրվող տեղեկությունների կազմը եւ նշված գրանցամատյանը վարելու կարգը սահմանվում են Կոնվենցիային կից Արտոնագրային հրահանգով:

3) Եվրասիական գերատեսչությունն արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագիր տրամադրելու վերաբերյալ տեղեկությունները հրապարակում է Եվրասիական գերատեսչության պաշտոնական տեղեկագրում: Հրապարակվող տեղեկությունների կազմը եւ հրապարակման ժամկետները սահմանվում են Կոնվենցիային կից Արտոնագրային հրահանգով:

4) Եվրասիական գերատեսչությունն արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագիրը հայտատուին է տրամադրում դրա տրամադրման վերաբերյալ տեղեկությունների հրապարակումից անմիջապես հետո:

5) Արդյունաբերական նմուշի գրանցումը, արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագրի տրամադրման վերաբերյալ տեղեկությունների հրապարակումը եւ արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագրի տրամադրումն իրականացվում են Եվրասիական գերատեսչության կողմից՝

հայտատուի կողմից համապատասխան տուրքը վճարելու պայմանով:

6) Արդյունաբերական նմուշների եվրասիական արտոնագրերի գրանցամատյանից քաղվածքները, որոնք հարցվում են Պայմանավորվող պետություններից մեկում դրանք ներկայացնելու նպատակով, ազատվում են ցանկացած տեսակի օրինականացումից (լեգալիզացումից):

Հոդված 16

Ներկայացուցչությունը

1) Ազգային գերատեսչության առջեւ ներկայացուցիչ լինելու իրավունք ունեցող եւ Եվրասիական գերատեսչությունում որպես արտոնագրային հավատարմատար գրանցված ցանկացած անձ կարող է Եվրասիական գերատեսչության առջեւ հանդես գալ որպես ներկայացուցիչ (այսուհետ՝ արտոնագրային հավատարմատար):

2) Հայտատուն, ինչպես նաեւ արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագրի իրավատերը, որոնք մշտական բնակության վայր կամ մշտական գտնվելու վայր չունեն Պայմանավորվող պետություններից որեւէ մեկի տարածքում, պետք է ներկայացվեն արտոնագրային հավատարմատարի միջոցով:

3) Պայմանավորվող պետություններից որեւէ մեկի տարածքում մշտական բնակության վայր կամ մշտական գտնվելու վայր ունեցող հայտատուն արդյունաբերական նմուշների եվրասիական հայտեր կարող է ներկայացնել, ինչպես նաեւ այդպիսի հայտերի եւ արդյունաբերական նմուշների եվրասիական արտոնագրերի առնչությամբ Եվրասիական գերատեսչության հետ գործեր կարող է վարել՝

i) ինքնուրույն,

ii) արտոնագրային հավատարմատարների միջոցով,

iii) արտոնագրային հավատարմատարներ չհանդիսացող ներկայացուցիչների միջոցով:

Հոդված 17

Արդյունաբերական նմուշի եվրասիական հայտի փոխակերպումը ազգային հայտի

1) Արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագրի տրամադրումը մերժելու մասին որոշումը կամ այդպիսի որոշման դեմ ներկայացված առարկության բավարարումը մերժելու մասին որոշումը Եվրասիական գերատեսչության կողմից հայտատուին ուղարկվելու օրվանից մինչեւ վեց ամիսը լրանալը հայտատուն կարող է միջնորդություն ներկայացնել Եվրասիական գերատեսչություն՝ նշելով այն Պայմանավորվող պետությունները, որտեղ նա ցանկանում է արդյունաբերական նմուշի արտոնագիր ստանալ ազգային ընթացակարգով:

2) Այդ կերպ նշված յուրաքանչյուր Պայմանավորվող պետությունում արդյունաբերական նմուշի համար եվրասիական այն հայտը, որի վերաբերյալ այդպիսի որոշում էր ընդունվել եւ որն այդպիսի միջնորդության առարկա է,

համարվում է ազգային գերատեսչություն ներկայացված ճիշտ ձեւակերպված ազգային հայտ՝ միևնույն ներկայացման թվականով, և, եթե այդպիսին կա, առաջնայնության թվականով, ինչ եւ արդյունաբերական նմուշի եվրասիական հայտը՝ համապատասխան Պայմանավորվող պետության ազգային օրենսդրությամբ նախատեսված բոլոր հետեւանքներով, եւ ազգային գերատեսչությունում ենթակա է հետագա ընթացակարգի՝ պայմանով, որ հայտատուն ազգային գերատեսչությանը կվճարի պահանջվող ազգային տուրքերը:

Հոդված 18

Տուրքերը

1) Արդյունաբերական նմուշի եվրասիական հայտի կամ արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագրի նկատմամբ սույն Արձանագրության եւ Կոնվենցիային կից Արտոնագրային հրահանգի դրույթներին համապատասխան իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների կատարման համար Եվրասիական գերատեսչությանը վճարվում են տուրքեր, որոնք պատկանում են Կազմակերպությանը՝ հաշվի առնելով սույն հոդվածի 2-րդ եւ 3-րդ կետերը:

2) Սույն Արձանագրության 13-րդ հոդվածի 3-րդ կետում հիշատակված՝ արդյունաբերական նմուշի եվրասիական հայտը մշակելու եւ ուղարկելու համար տուրքը վճարվում ու պատկանում է այն ազգային գերատեսչությանը, ուր ներկայացվել է արդյունաբերական նմուշի եվրասիական հայտը:

3) Սույն Արձանագրության 8-րդ հոդվածի 2-րդ կետին եւ 15-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան Եվրասիական գերատեսչությանը վճարվող տուրքերը բաշխվում են Կազմակերպության եւ Պայմանավորվող պետությունների միջեւ՝ Կազմակերպության Վարչական խորհրդի՝ քվեարկությանը մասնակցող՝ Պայմանավորվող պետությունների լիազորված ներկայացուցիչների (նրանց տեղակալների) երկու երրորդի մեծամասնությամբ ընդունված որոշմանը համապատասխան: Ընդ որում, Կազմակերպության տնօրինության ներքո պետք է մնա նշված տուրքերի առնվազն մեկ հինգերորդը, դրանց մնացած մասը փոխանցվում է համապատասխան ազգային գերատեսչություններին:

ՄԱՍ IV

ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻՆ ԿԻՑ ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՀՐԱՀԱՆԳԸ

Հոդված 19

Ընդհանուր դրույթներ

Կոնվենցիային կից Արտոնագրային հրահանգը, Կոնվենցիայի 14-րդ եւ 19-րդ հոդվածներով սահմանված մանրամասներից բացի, պարունակում է սույն Արձանագրությանը համապատասխան պահպանվող՝ արդյունաբերական նմուշների

մասով իրավունքի նյութական եւ ընթացակարգային նորմերին վերաբերող մանրամասներ:

Հոդված 20

Իրավունքի նյութական նորմերը

Կոնվենցիային կից Արտոնագրային հրահանգը պարունակում է սույն Արձանագրության II մասով սահմանված մանրամասներ, որոնք վերաբերում են իրավունքի նյութական նորմերին, մասնավորապես՝

i) արդյունաբերական նմուշին ներկայացվող պահանջներին եւ դրա արտոնագրաունակության պայմաններին.

ii) արդյունաբերական նմուշն արտոնագրաունակ ճանաչելուն չխոչընդոտող հանգամանքներին.

iii) արդյունաբերական նմուշի եվրասիական հայտի նկատմամբ իրավահաջորդությանը.

iv) արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագիր ստանալու նկատմամբ իրավունքի փոխանցմանը.

v) առաջնության իրավունքին.

vi) ժամանակավոր իրավական պահպանությանը.

vii) արդյունաբերական նմուշի իրավական պահպանության ծավալին.

viii) արդյունաբերական նմուշի նկատմամբ բացառիկ իրավունքին.

ix) արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագրի նկատմամբ իրավահաջորդությանը.

x) արդյունաբերական նմուշի նկատմամբ բացառիկ իրավունքը փոխանցելու մասին պայմանագրին, լիցենզային պայմանագրին եւ արդյունաբերական նմուշի նկատմամբ բացառիկ իրավունքի շրջանառության ոլորտում այլ պայմանագրերին.

xi) արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագրի վավերականությանը, այն անվավեր ճանաչելու հիմքերին:

Հոդված 21

Իրավունքի ընթացակարգային նորմերը

Կոնվենցիային կից Արտոնագրային հրահանգը պարունակում է սույն Արձանագրության III մասով սահմանված մանրամասներ, որոնք վերաբերում են իրավունքի ընթացակարգային նորմերին, մասնավորապես՝

i) արդյունաբերական նմուշի եվրասիական հայտի ձեւին, կազմին ու բովանդակությանը ներկայացվող պահանջներին.

ii) արդյունաբերական նմուշի եվրասիական հայտի եւ արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագրի առնչությամբ գործավարությանը.

iii) արտոնագրային հավատարմատարներին ներկայացվող պահանջներին, նրանց ատեստավորման եւ գրանցման կարգին.

iv) արդյունաբերական նմուշի եվրասիական հայտ ներկայացման թվականը սահմանելուն.

v) ժամկետների հաշվարկին, դրանք բաց թողնելու հետեւանքներին, գործավարությունը շարունակելու պայմաններին ու կարգին եւ իրավունքների վերականգնմանը.

vi) առաջնության խնդրարկումը.

vii) տուրքերի վճարման կարգին ու ժամկետներին.

viii) արդյունաբերական նմուշի եվրասիական հայտի մեջ փոփոխությունների ու ճշգրտումների կատարմանը.

ix) արդյունաբերական նմուշի եվրասիական հայտի փորձաքննությանը, այդ թվում՝ նախնական փորձաքննությանը եւ ըստ էության փորձաքննությանը, դրանց արդյունքներով ընդունվող որոշումներին, ինչպես նաեւ առարկությունների ներկայացմանն ու քննարկմանը.

x) Եվրասիական գերատեսչության՝ արդյունաբերական նմուշներին առնչվող փաստաթղթերին ու տեղեկատվական ծառայություններին.

xi) արդյունաբերական նմուշների եվրասիական արտոնագրերի գրանցամատյանում արդյունաբերական նմուշների գրանցմանը, նշված գրանցամատյանում մուտքագրվող տեղեկությունների կազմին, դրա վարման կարգին եւ դրանից քաղվածքների տրամադրմանը.

xii) արդյունաբերական նմուշների եվրասիական արտոնագրերի տրամադրմանը.

xiii) արդյունաբերական նմուշների եվրասիական հայտերի եւ արդյունաբերական նմուշների եվրասիական արտոնագրերի վերաբերյալ տեղեկությունների հրապարակմանը.

xiv) Եվրասիական գերատեսչության պաշտոնական տեղեկագրին՝ արդյունաբերական նմուշներին առնչվող մասով.

xv) արդյունաբերական նմուշների եվրասիական արտոնագրերը անվավեր ճանաչելու կարգին.

xvi) արդյունաբերական նմուշների եվրասիական հայտերը ազգային հայտերի փոխակերպելուն.

xvii) Եվրասիական գերատեսչության՝ արդյունաբերական նմուշների մասով շփումներին հայտատուների, արդյունաբերական նմուշների եվրասիական արտոնագրերի իրավատերերի, ներկայացուցիչների եւ այլ անձանց հետ ու

Եվրասիական գերատեսչության փաստաթղթերին նշված անձանց ծանոթանալու կարգին:

ՄԱՍ V

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 22

Ստորագրումը. Արձանագրությունն ուժի մեջ մտնելը

1) Սույն Արձանագրությունը ստորագրվում է ռուսերենով:

2) Սույն Արձանագրությանն անդամակցությունը բաց է Միավորված Ազգերի Կազմակերպության ցանկացած անդամ պետության համար, որը պարտավորված է Կոնվենցիայով, ինչպես նաեւ Փարիզյան կոնվենցիայով:

Սույն Արձանագրության մասնակիցը դառնալու համար պետությունը պետք է կա՛մ ստորագրի Արձանագրությունը եւ վավերագիրն ի պահ հանձնի ավանդապահին, կա՛մ ավանդապահին ի պահ հանձնի միանալու մասին ակտը:

Սույն Արձանագրությունը բաց է ստորագրման համար Նուր-Սուլթան քաղաքում միջազգային համաժողովին՝ դրա ընդունումից հետո, այնուհետեւ՝ մտավոր սեփականության Համաշխարհային կազմակերպության գլխավոր գրասենյակում՝ նախքան դրա ուժի մեջ մտնելը:

Սույն Արձանագրությունը բաց է միանալու համար սույն կետի առաջին մասում հիշատակված՝ Արձանագրությունը չստորագրած ցանկացած պետության համար:

3) Սույն Արձանագրության նկատմամբ որեւէ վերապահումներ չեն թույլատրվում:

4) Սույն Արձանագրությունն այն վավերացրած կամ դրան միացած առաջին երեք պետությունների համար ուժի մեջ է մտնում երրորդ պետության կողմից վերը նշված փաստաթղթերից մեկն ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից երեք ամիս հետո: Ցանկացած այլ պետության համար սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում իր վավերագիրն ի պահ հանձնելու կամ միանալու մասին ակտն ի պահ հանձնելու օրվանից երեք ամիս հետո: Ընդ որում, արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագիրն այդպիսի պետության տարածքում գործում է, եթե համապատասխան արդյունաբերական նմուշի եվրասիական հայտը ներկայացվել է այդ պետության համար սույն Արձանագրությունն ուժի մեջ մտնելուց հետո:

Հոդված 23

Անցումային դրույթներ

Քանի դեռ Կոնվենցիայի բոլոր մասնակից պետությունները չեն դարձել Պայմանավորվող պետություններ, Կազմակերպության Վարչական խորհրդի՝ արդյունաբերական նմուշներին առնչվող՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի 3-րդ կետի

«vi»-«ix» ենթակետերին եւ սույն Արձանագրությանը համապատասխան իր իրավասության շրջանակներում գտնվող հարցերի շուրջ որոշումները կընդունվեն Պայմանավորվող պետությունների լիազորված ներկայացուցիչների (նրանց տեղակալների) կողմից:

Հոդված 24

Արձանագրության շուրջ վեճերի կարգավորումը

Սույն Արձանագրության մեկնաբանման կամ կիրառման հետ կապված հարցերի շուրջ Պայմանավորվող պետությունների միջեւ ցանկացած վեճի առաջացման դեպքում մտավոր սեփականության Համաշխարհային կազմակերպության Գլխավոր տնօրենը, վեճին մասնակից ցանկացած կողմի խնդրանքով, հանդես է գալիս որպես միջնորդ՝ կողմերին վեճի կարգավորմանը բերելու համար:

Հոդված 25

Արձանագրության վերանայումը

1) Սույն Արձանագրությունը Պայմանավորվող պետությունների կողմից կարող է վերանայվել ցանկացած ժամանակ:

2) Սույն արձանագրության վերանայման նպատակով Պայմանավորվող պետությունների համաժողով հրավիրելու հարցը կարգավորվում է Կազմակերպության Վարչական խորհրդի կողմից: Կազմակերպության Վարչական խորհուրդը կարգավորում է նաեւ ընթացակարգի կանոնների եւ սույն Արձանագրության վերանայմանն ուղղված համաժողովին վերաբերող այլ մանրամասների հետ կապված հարցերը:

Հոդված 26

Արձանագրությունը չեղյալ հայտարարելը

1) Պայմանավորվող պետությունն իրավունք ունի չեղյալ հայտարարելու սույն Արձանագրությունը՝ մտավոր սեփականության Համաշխարհային կազմակերպության գլխավոր տնօրենին ուղարկված ծանուցման միջոցով: Այդպիսի չեղյալ հայտարարումն ուժի մեջ է մտնում Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Գլխավոր տնօրենի կողմից համապատասխան ծանուցումն ստանալու օրվանից տասներկու ամիս հետո:

2) Մինչեւ չեղյալ հայտարարումն ուժի մեջ մտնելը ներկայացված հայտերի հիման վրա տրված՝ արդյունաբերական նմուշների եվրասիական արտոնագրերը սույն Արձանագրությունը չեղյալ հայտարարած պետության տարածքում գործում են դրանց գործողության ամբողջ ժամկետի ընթացքում՝ ներառյալ այդ ժամկետը երկարաձգելու՝ սույն Արձանագրությամբ թույլատրելի դեպքերը:

Հոդված 27

Արձանագրության ավանդապահը

Սույն Արձանագրության ավանդապահը Մտավոր սեփականության Համաշխարհային կազմակերպության Գլխավոր տնօրենն է:

Կատարված է Նուր-Սուլթան քաղաքում, 2019 թվականի սեպտեմբերի «9»-ին, մեկ բնօրինակից՝ ռուսերենով:

Ադրբեջանի Հանրապետության Կառավարության կողմից՝ *(ստորագրություն)*

Ղրղզստանի Հանրապետության Կառավարության կողմից՝ *(ստորագրություն)*

Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից՝ *(ստորագրություն)*

Բելառուսի Հանրապետության Կառավարության կողմից՝ ----------

Ղազախստանի Հանրապետության Կառավարության կողմից՝ *(ստորագրություն)*

Տաջիկստանի Հանրապետության Կառավարության կողմից՝ ----------

Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից՝ *(ստորագրություն)*

Թուրքմենստանի Կառավարության կողմից՝ ----------

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2019թ. սեպտեմբերի 9-ին ստորագրված «1994թ. սեպտեմբերի 9-ի Եվրասիական արտոնագրային կոնվենցիային կից «Արդյունաբերական նմուշների պահպանության մասին» արձանագրության հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն